ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հոկտեմբեր 2015 թվականի N 188-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի ԹԻՎ 25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 18-ի թիվ 02/03.22/2422-15 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2013 թվականի մարտի 13-ի <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի կանոնակարգը հաստատելու մասին>> թիվ 25-Ա որոշման 1-ին հավելվածում կատարել հետևյալ լրացումները .

1) 1-ին կետի <<թիվ 974-ն>> բառերից հետո լրացնել <<2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն, 2012 թվականի փետրվարի 23-ի թիվ 165-Ն և 2012 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 1096-Ն >> բառերը

2) 41 կետից հետո ավելացնել 41.1 կետ հետևյալ բովանդակությամբ .

<<Սահմանել, որ գնումների համակարգողը գնման ընթացակարգի արձանագրությունը հաստատվելուն, իսկ պատասխանատու ստորաբաժանումը հանձնման-ընդունման արձանագրությունը, իսկ ապրանքների դեպքում նաև պահեստ մուտքագրման օրդերի պատճենները կազմելուն հաջորդող աշխատանքային օրը գրավոր տրամադրում են ներքին աուդիտի բաժնին>>:

3) 52 կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ

<<Հավաստիացման ծառայությունների միջոցով, հետ հսկողության շրջանակում աուդիտի են ենթարկվում մարզպետարանի կարիքների համար տվյալ տարվա ընթացքում գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների առնվազն 30 տոկոսը և գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գնումները: Ընդ որում գնման ընթացակարգի աուդիտն իրականացվում է գնման ընթացակարգերի արձանագրությունների (փաստաթղթերի) և դրանցում տեղ գտած տեղեկությունների գնահատման միջոցով, իսկ պայմանագրի կատարման աուդիտն իրականացվում է պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների՝ պայմանագրին համապատասխան կատարված լինելը գնահատելու միջոցով:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

07 հոկտեմբեր 2015թ.
ք. Իջևան